

ԱՂՕԹՔ ՅԱԶՈՂՈՒԹԵՆԷ ՄԸ ԵՏԶ

Բարերար Աստուած, միայն դուն ես, որ զիս քու բարիքներովդ կ'ողորդես:

Կ'օրհնաբանեմ քեզ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ այն բոլոր բարիքներուն համար, որ առատօրէն անարժանիս կը պարգեւես քու սիրոյ զանձերէդ: Կը փառաւորեմ քեզ եւ ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտնեմ, միշտ եւ ամէն բանի համար եւ ամէն բանէ աւելի կը խնդրեմ, որ քու արքայութիւնդ, արդարութիւնդ եւ իմաստութիւնդ շնորհես ինձի, որպէսզի կարենամ լաւապէս մատակարարել ձրիօրէն քու տուած պարգեւներդ, կանուխէն խորհելով եւ պատրաստուելով ապագայ ձախորդութեանց եւ ըստ այնմ յօժարակամ ուրախութեամբ կարօտեալներուն տամ ինչ՝ որ պէտք է իրենց, ինչպէս դուն կը բաւարարես իմ բոլոր պէտքերս: Կ'աղաչեմ, քու բարի պարգեւներովդ հետ միասին, նաեւ խոնարհ, հեզ եւ զթասիրտ հոգի մը տուր ինձի, որպէսզի քու կամքիդ եւ սուրբ օրհնքիդ համաձայն ապրիմ եւ նոյնիսկ երբ ձախորդութեան եւ չքաւորութեան, վիշտերու եւ տագնապներու մատնուիմ, կարենամ տոկալ եւ կրել քաջութեամբ, անարտունջ եւ գոհունակ սրտով, միշտ շնորհակալութիւն յայտնելով քու սուրբ կամքիդ համար, որովհետեւ քեզմէ՛ է ամէն բան եւ դո՛ւն է, որ կը հատուցանես, մեր գործերուն եւ մտածողութեան համաձայն: Քեզի փառք յաւիտեանս: Ամէն:

ՄԱՍ



Անցեալին երբ նշխարի կը պատրաստէին, սովորութիւն էր առատ պատրաստել, որոնցմէ լաւագոյն կը պահէին Ս. Պատարագի Խորհուրդին համար, իսկ մնացեալը՝ Ս. Պատարագի աւարտին կը բաժնէին այն հաւատացեալներուն, որոնք չէին հաղորդուէր: Այս երեսոյթը բարեպաշտական մասնակցութիւնը կը նկատուէր այն հաւատացեալներուն համար, որոնք հոգեկան գոհունակութիւն կ'ունենային Ս. պատարագէն մաս եւ բաժին ունենալու համար:

Այսօր այս աւանդութիւնն ու սովորութիւնը փոխակերպուած է: Նշխարի փոխարէն նոյն խմորով պատրաստուած (առանց թթւանորի) մասն է, որ կը բաժնուի հաւատացեալներու...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱՒԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆԻԱՐ 2022

ԹԻԻ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գդ. 4.1-7: Ղուկ. 1.26-38

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 1.26-38

Եղիաաբէթի յղութեան վեցերորդ ամսուն, Աստուած Գ-արքիէլ հրեշտակը որկեց Գ-ալիլեայի Նազաբէթ քաղաքը կոյսի մը մօտ, որ նշանուած էր Դ-աւիթի սերունդէն Յովսէփ անունով մէկու մը հետ: Կոյսին անունը Մարիամ էր: Հրեշտակը Մարիամի գալով ըսաւ.

- Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է:

Մարիամ այս խօսքին վրայ խռովեցաւ: Կը մտածէր, թէ ի՞նչ կը նշանակէ այս ողջոյնը: Սակայն հրեշտակը ըսաւ իրեն.

- Մի՛ վախնար, Մարիամ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս եւ զաւակ մը ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անիկա մեծ պիտի ըլլայ եւ Բարձրեալին Որդին պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դ-աւիթի գահը, եւ անիկա Յակոբի սերունդներուն վրայ յաւիտեանս պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ:

Մարիամ ըսաւ հրեշտակին.

- Ատիկա ի՞նչպէս կրնայ պատահիլ, երբ ամուսնացած չեմ:

Հրեշտակը պատասխանեց.

- Սուրբ Հոգին քեզի պիտի գայ եւ Բարձրեալին զօրութիւնը քու վրայ պիտի հանգչի: Ուստի ծնելիք զաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի: Ահա ազգականդ Եղիաաբէթն ալ, հակառակ ծեր եւ ամուլ ըլլալուն՝ վեցերորդ ամիսն է, որ յղի է: Գիտցի՛ր, որ Աստուծոյ համար անկարելի բան չկայ:

Մարիամ ըսաւ.

- Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ:

Ապա հրեշտակը գնաց Մարիամի քովէն:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Քրիստոսի անունին, այսինքն՝ Յիսուս անունը դրուելու յիշատակութիւնն է: Յիսուս կը թարգմանուի Փրկիչ, ինչպէս հրեշտակին կողմէ դնել հրամայուած էր Մարիամու Աւետման ատեն (Լուկ. Ա.31) եւ ինչպէս իրօք ալ դրուեցաւ ծնելուն Ը. օրը թլփատութեան արարողութեան առթիւ (Լուկ. Բ. 21), Հրեական օրէնքին համեմատ: Անուանակոչութիւնը իբր առանձին տօն նշանակուած չէ Տօնացոյցին մէջ, այլ նոր օրացոյցները սովորութիւն ըրին այսպէս նշանակել Ծննդեան Ը. օրը, Յունուար 13-ին, փոփոխելով Տօնացոյցին նշանակած Թլփատութեան տօնը: Յիսուս անունը գործածուած է սովորաբար անտարանին մէջ, բայց այժմ անի գործածական է Քրիստոս անունը, որ է Մեսիա՝ Օծեալ: Աւետարանին մէջ Քրիստոսի տրուած է նաեւ Էմմանուէլ անունը (Մտք. Ա. 23), հետեւելով Եսայեայ մարգարէութեան (Եսայ. Է. 14)

ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն իրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՍՆՈՒ՞

Աստուած չի տեսնուիր, որովհետեւ Հոգի է, բայց կը յայտնուի ամէն տեղ եւ ամէն ժամանակ իր հրաշալի ստեղծագործութիւններուն մէջ եւ մարդ՝ իբրեւ կատարելագոյնը ստեղծագործութիւններուն, իր Հոգիով կը հաղորդակցի Աստուծոյ հետ: Այլ խօսքով, մարդոց Աստուծոյ վրայ խորհելու կարողութիւնը ինքնին ապացոյց մըն է Աստուծոյ գոյութեան, որուն հետ կը հաղորդակցի իր Հոգիով:

Մարդու Հոգին ալ չի տեսնուիր, բայց կը յայտնուի անոր իմացակառնութեան ու ազատ կամքին մէջ եւ մարդը իր այս Հոգիովն է, որ կը հաղորդակցի Աստուծոյ հետ:

ԽՐԱՏ՝ ԲՈՂՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ՝

ՀԱԻԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքը մարդուն սրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետեւ պտուղը՝ արմատէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչպէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԱՆՍԱՐԿ ԱՐԺԱՆԻ ՏԵՂԸ ԶԻ ՏԱՐ ՄԵՂԻ

Երբ բարձր պաշտօն ու հանգամանք ունեցող մարդիկ տեղ մը պիտի երթան, սկիզբէն ճշդուած կ'ըլլայ թէ անոնք որ աթոռին եւ որու կողքին պիտի բազմին, ճշդուած կ'ըլլայ նաեւ թէ որ փառաւոր սենեակին մէջ պիտի գիշերեն: Մեր քաղցր երկնաւոր Հայրը նման մտահոգութիւններ չունեցաւ, երբ իր Որդին աշխարհ պիտի դրկէր: Որդին ինքն ալ նման մտահոգութիւններ չունեցաւ: Ան թագաւորներուն Թագաւորն էր բայց պալատի մէջ չծնաւ, այլ՝ ախոռի մէջ: Ան տնագործ երուն տուն տուողն էր բայց ինք տնագործ ճնաւ: Աշխարհ արժանի տեղը չտուաւ իր Տիրոջ երբ ան պիտի ծնէր: Իրեն շքեղ սենեակ մը տալու փոխարէն՝ մտուր մը տուաւ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Գիտնանք, որ եթէ Քրիստոսի հետեւորդներն ու զաւակներն ենք, աշխարհ չի տար մեզի այն բանը որուն արժանի ենք: Աշխարհ աշխարհասէր մարդուն միայն տեղ կու տայ: Աստուածասէր մարդը՝ գլուխը դնելու տեղ չունի հոս:

Ո՛վ Տէր Բաց հոգիս աչքերը որպէս զի տեսնեմ ճշմարիտն ու ուղիղը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԿՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՐԻՏԵՆԱԿԱՆ ԳԱՏԱՏԱՆԻՆ ՄԱՍԻՆ, Կարդանք՝ Սաղմոս 50

Աստուած, Տէր Աստուածը ինք՝ խօսեցաւ եւ կոչ ուղղեց աշխարհին, արեւելքէն մինչեւ արեւմուտք: Աստուած պիտի փայլատակէ Միոնէն, որ կատարեալ է իր գեղեցկութեամբ: Մեր Աստուածը պիտի գայ՝ ո՛չ թէ լուռ կերպով, այլ՝ իր առջեւէն՝ լափող կրակով, եւ զինք շրջապատող սաստիկ փոթորիկով: Երկինք ու երկիր վկայ պիտի կանչէ, որպէսզի դատէ իր ժողովուրդը: Իմ քովս հաւաքեցէք ինձի հաւատարիմ մարդիկը, որոնք զոհ մատուցումով ինձի հետ ուխտ կնքած են: Եւ երկինքը պիտի հռչակէ անոր արդարութիւնը, որովհետեւ Աստուած ինքն է դատաւորը: Լսէ՛, ո՛վ իմ ժողովուրդս, եւ պիտի խօսիմ, եւ քեզի դէմ պիտի վկայեմ, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ, եւ՝ Աստուածս, քու Աստուածդ: Քու զոհերուդ համար չէ, որ քեզ կը հանդիմանեմ, ոչ ալ մշտականօրէն ինձի մատուցած ողջակէզներուդ համար: Ես պէտք չունիմ ազարակիդ ցուրտուն, ո՛չ ալ գոմերուդ նոխազներուն, որովհետեւ իմս են անտառին բոլոր կենդանիները, եւ հազարաւոր լեռներու վրայ արածող նախիրները, բարձունքներու թռչունները եւ բոլոր վայրի կենդանիները ծանօթ են ինձի եւ ինձի կը պատկանին: